www.shiraz.am

ՀՀ Գյումրու քաղաքապետարան
Հովհաննես Շիրազի տուն-թանգարան

ՀՀ, Գյումրի, 3104, Վարպետաց փ. 101
Հեռ:tel: +(37494) 434227
fax +(374312) 55142
E-mail: shirazmuseum@gmail.com
101, str.Varpetac, 3104, Gyumri, RA

Hovhannes SHIRAZ House-Museum

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավար՝ Սամվել Բալասանյանին

Հարգելի պրն Բալասանյան

Հայտնում եմ Ձեզ, որ պատրաստ է հրատարակության Հայ Մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազի *<<ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ>>* պոեմը:

Պոեմի նոր հրատարակությունը, խորհրդային ժամանակների կրճատումների վերականգնումներով հարստացած, առավել ամբողջականն է:

Գրքի ձեռագրերի հետ աշխատանքը և թվայնացումը կատարվել է Գյումրի համայքի Հովհաննես Շիրազի թանգարանում:

Գիրքը տպագրության է պատրաստվել ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականությոն պատմության ամբիոնում ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյան ղեկավարությամբ:

Գիրքը կազմել են նաև Հովհաննես Շիրազի զավակներ՝ Անի և Վանանդ Շիրազը:

Գրքի տպագրության ծախսը 500 օրինակի համար կազմում է 1530000 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

<<Տպագրական աշխատանքների կատարման գնման պայմանագիր>>-ը կցվում է:

Խնդրում եմ Ձեր աջակցությունը ֆինանսավորելու գրքի տպագրությունը և շնորհանդեսը ներառելու <<ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ – 2021>> միջոցառումների ծրագրում:

*« 05 » մայիս 2021 թ.*
*ք. Գյումրի*

Հարգանքով՝
Արա Պապանյան
Թանգարանի տնօրեն

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 05 05 2[1] թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 7712

# ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ք. Երևան** **03.05. 2021թ.**

«Գյումրու Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Պապանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Թումանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հովհաննես Շիրազի «Դանթեական» գրքի տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն 4.1 կետում նշված գումարը փոխանցում է Կատարողի հաշվարկային հաշվին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

7.8Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Գյումրու Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ
ք.Գյումրի, Վարպետաց 101

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510037956070100

ՀՎՀՀ 05520665

Տնօրեն ____________ Ա.Պապյան

ԿԱՏԱՐՈՂ
«Հայրապետ հրատարակչություն» ՍՊԸ

ք.Երևան, Նոր Արեշ 26/1

Յունիբանկ Կենտրոն մ/ճ

Հ/Հ 24102114881200

ՀՎՀՀ 00650284

Տնօրեն ____________ Ս.Թումանյան

Հավելված 1

03.05.2021թ .կնքված ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/Հ | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը | միավորի գին/ՀՀ դրամ/ | Ընդամենը /ՀՀ դրամ/ | մատակարարման ժամկետը | դիմաց վճարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յովհաննես Շիրազ «Դանթեական» | գրքի չափսը 60/84 1/16, 25 տպ.մամուլ, 400 էջ, թուղթը դեղին գույնի օֆսեթ 80 գր,կազմը համար 8 | օրինակ | 500 | 3060 | 1530000 | 31.08.2021թ | 15.05.2021 |
| | | | | | | | | |

Այլ պայմաններ: Արդյունքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում Պատվիրատուն իր միջոցներով և իր հաշվին:

ԿԱՏԱՐՈՂ

«Հայրապետ հրատարակչություն»ՍՊԸ
ք.Երևան ,Նոր Արեշ 26/1
Յունիբանկ Կենտրոն մ/ճ
Հ/Հ 24102114881200
ՀՎՀՀ 00650284
Տնօրեն ______________
Ս.Թումանյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Գյումրու Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան»ՀՈԱԿ
ք.Գյումրի ,Վարպետաց 101
«Արարատբանկ»ԲԲԸ
Հ/Հ 1510037956070100
ՀՎՀՀ 05520665
Տնօրեն ______________
Ա.Պապանյան